զնա առ իւր զաւուրս յիսուն՝ ետ նմա հրովարտակ իշխանական պատուոյ, և յետկար մշտնջենաւոր խաղաղութեան՝ խոստացեալ յամենայնի օգնութիւն ժամանեցուցանել նմա, միայն թէ հաւատարմութեամբ կացցէ և նա՝ նոյնպէս և յաջորդք նորա ի հնազանդութիւն թագաւորին թաթարաց։ Եւ ապա ետ նմա յատուկ գիր ազատութեան եկեղեցեաց, և թուղթ թեթեւութեան հարկաց արեւելեայ հայոց բնակելոց ի Հայաստան, և բանիւ նորա կոչեալ յետս զԱրղուն հարկահան՝ ետ ի բանտի կարգեալ և գունդ մի զօրաց ի զգուշութիւն ճանապարհորդութեան՝ արձակեաց յիւրմէ զՀեթում արքայ գնալ յաշխարհ իւր ի Կիւլիկիա։

Մեկնեալ Հեթումայ արքային ի Մանգոյ խանէն՝ ել ի ճանապարհ, և ի չուել անդ իւրում առաքեաց առ Բաթու զԲարսեղ քահանայն հանդերձ հրովարտակօք մեծի խանին, զի և ի նմանէ առցէ զհաւանութիւն։ Եւ ինքն շրջեալ ընդ բազում տեղիս, զորոց մի ըստ միոջէ և երկար գրէ Կիրակոս, եկն եհաս ի Հայս ի Շիրակ գաւառ, և մատուցեալ առ Բաչու իշխանն՝ եցոյց նմա զհրովարտակս թագաւորին, և պատուեցաւ ի նմանէ. և եկեալ անդրէն ի գիւղն Վարդենիս՝ նստաւ ի տուն Քուրդ իշխանին, և սպասէր գալստեան Բարսեղ քահանայի։ Եկին յայնժամ առ նա ամենայն իշխանք և եպիսկոպոսունք և վարդապետք Հայոց, որք էին յայնոսիկ կողմանս, և մատուցին նմա պատիւ մեծ իբրեւ իւրեանց թագաւորի. և նա եւս եցոյց ամենեցուն նոցա սէր բազում, և ետ բազմաց պարգեւս, աղաչելով զամենեսին կալ առ միմեանս սիրով և միաբանութեամբ։

Եւ իբրեւ եհաս անդր Բարսեղ քահանայ, ել Հեթում արքայ ի ճանապարհ հանդերձ զօրօք թաթարաց, զորս ետ նմա Բաչու, և հասեալ ի միջագետս՝ արձակեաց զնոսա յիւրմէ բազում պարգեւօք, և ինքն եկն իւրովքն հանդերձ յերկիր իւր ի Կիւլիկիա ի մարերի ԻԹ, ի յունիսի 5, որոյ ընդ առաջ ելեալ որդիք նորա Լեւոն և Թորոս հանդերձ զօրօք և ժողովրդեամբք՝ տարան բազում պատուով ի Սիս արքայանիստ քաղաքն»։

Դարբանդի երկաթէ դռնովն՝ Քրիստոսի 80 թուին անցել է մեծ յաղթանակաւ մեր Արտաշէս Ա. թագաւորը, երբ յաղ-